ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ԲՄԱՊՁԲ-21-7/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «06» 04. 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և «Մաքս Օիլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Մելքոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 19.02.2021թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-21-7/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 3.13 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով հատկացված ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված N 1-ի և 2-ի:

1.2 Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայնագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով, Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 1,689,000.000 (մեկ միլիարդ վեց հարյուր ութսունինը միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Մաքս Օիլ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան Տպագրիչների 8
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570026452480100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02662703
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Կ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հավելված N 1
N ԲՄԱՊՁԲ-21-7/1-1 ծածկագրով
պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը՝ մինչև 2021թ.-ի մայիսի 31-ը
1.	Ավիավառելիք/ ավիացիոն կերոսին/	տ.	3,000	339,000	1,017,000,000	3,000
2.	Դիզելային վառելիք /Ձմեռային դիզ.վառելանյութ/	տ.	1,200	560,000	672,000,000	1,200

Հավելված N 2
N ԲՄԱՊՁԲ-21-7/1-1 ծածկագրով
պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկա	CPV կոդ	Ընդհանուր գին/դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2021թ., ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ., ընդ որում՝		
				2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1.	Ավիավառելիք/ ավիացիոն կերոսին/	09131100/507	1,017,000,000	1,017,000,000	1,017,000,000	1,017,000,000
2.	Դիզելային վառելիք /Ձմեռային դիզ.վառելանյութ/	09134250/501	672,000,000	672,000,000	672,000,000	672,000,000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Մաքս Օյլ» ՍՊԸ
տնօրեն

Կ. ՄԵԼՔՈՆՅԱՆ